**Հավելված N 1**
<u>ՀՀ ՏՄՆՀՀ-ԷԱՃԱՊՁԲ24/24 ծածկագրով</u>
**Էլեկտրոնային աճուրդի հրավերի**

# ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու

«ԷՍԷՍԹԻ» ՍՊԸ-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյանի համայնքապետարանի կողմից ՀՀ ՏՄՆՀՀ-ԷԱՃԱՊՁԲ24/24 ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) 1,2,3-րդ չափաբաժիններին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

«ԷՍԷՍԹԻ» ՍՊԸ-ն -ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ:
«ԷՍԷՍԹԻ» ՍՊԸ-ի՝

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 03576331
- բանկային հաշվեհամարն է՝ 2480103795220000
- գործունեության հասցեն է՝ Կոտայքի մարզ, Վ. Պտղնի 1 փ. 58
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ sst.llc@mail.ru
- հեռախոսահամարն է՝ 033545383
- ռուսերեն լեզվով անվանումն է՝ «ССТ» ООО

Սույնով «ԷՍԷՍԹԻ» ՍՊԸ -ն հայտարարում և հավաստում է, որ՝

1) «ԷՍԷՍԹԻ» ՍՊԸ -ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են <u>ՀՀ ՏՄՆՀՀ-ԷԱՃԱՊՁԲ24/24 ծածկագրով</u> ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և «ԷՍԷՍԹԻ» ՍՊԸ-ն պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում:

2) ընթացակարգին մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և թույլ չի տալու անբարեխիղճ մրցակցություն, գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
- բացակայում է հրավերով սահմանված՝ «ԷՍԷՍԹԻ» ՍՊԸ -ին փոխկապակցված անձանց և (կամ) «ԷՍԷՍԹԻ» ՍՊԸ-ի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս «ԷՍԷՍԹԻ» ՍՊԸ-ին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:
- ստորև ներկայացնում է (Հավելված 1,2) հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ) և հավաստում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավատի տեղեկություններ:

3) ապահովված է դիմում-հայտարարությունը ներկայացնելուց հետո էլեկտրոնային աճուրդի համակարգի կողմից տրամադրված եզակի ծածկագրի (PIN կոդը) անվտանգությունն ու գաղտնիությունը և դրա օգտագործմամբ էլեկտրոնային աճուրդի համակարգում ընթացակարգին մասնակցելուց բխող ցանկացած գործողություն կատարվում է համապատասխան լիազորություն ունեցող անձի կողմից:

«ԷՍԷՍԹԻ» ՍՊԸ կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացվում է՝ համակարգի միջոցով:

«ԷՍԷՍԹԻ» ՍՊԸ
տնօրեն՝

Digitally signed by
YAYLYAN YEGHIA 3605880304
Date: 2024-08-19 13:03:40

Ե. Յայլյան